



Մ Ր Մ Ր Մ Տ

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱ-
ՎԱՐԺԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԹԵՄԳ. ԻԸ. ՏԱՐԻ.

ՀԱՄԱՐ ԶՈՐԲՈՐԳ

ԱՊՐԷԼ 1895 Թ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԸՐԻՍՏՈՍ ԵԱՐԵԱՆ Ի ՄԵՌՆԵՐՈՅ:



կան Ջատկի օրերը և
կրկին մի անգամ բեր-
նէ բերան անցաւ այս
աւետարեք ողջոյնը.
քրիստոնեայ աշխար-
հի մի ծայրից միւս
ծայր հնչեցին այն
ղիւթական բառերը որ զարեբէ ի վեր կեան-
քի նշանաբան են եղել անթիւ մարդոց հա-

մար, թմրութեան և մեռելութեան մէջ իր-
բե կենդանարար և յուսատու մի պատգամ
արձագանք տուեր:

Մեզ համար ևս ուրախական զգացում-
ների արտայայտութիւն է այս ողջոյնը. բա-
րեկամ բարեկամի՝ ծանօթ անծանօթի նորա-
նով իւր ուրախութիւնն է յայտնում: Բարե-
կամական սիրով ընդհանուրի ուրախութիւնը
միմեանց մէջ բաժանելու հրաւիրում սակայն
ինչքան տարբեր են մեր զգացումները այն
կանանց զգացումներից, որոնց ականջին ա-
ռաջին անգամ հնչեց այդ ողջոյնը: Վէպի
մի գերեզման էին դիմում նոքա, մի մեռեալ
էին որոնում իրենց համար սիրելի՝ պաշտելի
մի անձի նշխարներին վերջին յարգանքը մա-
տուցանել էին կամենում գնում էին տխուր

մտքերով, դառնացած կսկծալի սրտով առանց կարողանալու հաշիւ տալ իրենց, թէ ինչպէս կատարուեցաւ այն ամենը, ինչպէս մի երկու օրուայ մէջ բոլոր իրենց յոյսերը խորտակուեցան, խոտացեալ Մեհիան, Մեծ Սարգսպետը, որին նոքա անպայման հաւատում, որից Խարայէլի փրկութիւնն էին ապրկեալում՝ ամենաանարդ մահով մեռաւ, իրերէ մի հասարակ մահկանացու գերեզմանի մէջ դրուեցաւ։ Սակայն ահա՛ բաց, դատարկ գերեզմանի առաջ նոցա դէմն է ելնում լուսոյ աւետարեր հրեշտակը, լոյս է փայլատակում նոցա շուրջը, դուրսն ու ներսը, և հիացած լսում են նոքա. «Օ, ի՞նչպէ՞ք զկենդանին ընդ մեռեալս՝ չէ՛ աստ, այլ յարեալ...» Յարեալ...

Քրիստոս յարեալ՝ ողջոյն, ուրախական բացականչութիւն չէ սա միայն, այլ նաեւ մի վկայութիւն, վկայութիւն մեծ ու փոքրի առաջ, թէ մենք զիտենք ու համոզուած ենք, որ գերեզմանից ելած, մահուան իշխանութիւնը խորտակող մէկը կայ, մեր Տէրն ու Փրկիչն է այդ մէկը, կենդանի միշտ, մեր կենդանութեան համար երաշխաւոր։ Սակայն ի՛նչպէս թոյլ է հնչում այդ վկայութիւնը մեր պաղ, անտարբեր շրթունքներից, ինչքան տարբեր ոյժ և ներգործութիւն ունէր նոյն վկայութիւնը, երբ առաջին անգամ առաքեալների բերանով աշխարհի առաջ քարոզուեցաւ. «Օ, այս Յիսուս յարոյց Աստուած, որում ամենեքին մէք վկայ եմք»։ Փքուն բառեր չէին գոքաւ սնտոի զառանցանք, այսպէս խօսում էին այն մարդիկը, որ մի քանի շաբաթ առաջ թողին՝ փախան, երբ իրենց Տէրը թշնամիների ձեռքը մատնուեցաւ. խօսում էր նոյն Պետրոսը, որ մի աղախնի ծառաների առաջ 3 անգամ ուրացաւ այդ Յիսուսի աշակերտ լինելը, և այժմ կանգնել վկայում է, վկայում է ամբողջ աշխարհի առաջ, վկայում է քահանայապետների, ծերերի՝ այնպիսի մարդոց առաջ, որոնց մի հրամանը բաւական էր նորան տեղն ու տեղը քարկոծ, չարամահ անելու, վկայում է և չէ փախնում, նոյն այն Յիսուսը, որին դուք փայ-

տի վերայ մեխեցիք, սպանեցիք, որ մեր աչքի առաջ գերեզմանի մէջ դրուեցու՝ այդ Յիսուսը կենդանի է, յարութիւն է առել, և մենք ամենքս դուրս վկաններ ենք, մեր աչքով տեսել, մեր ձեռքերով շօշափել ենք անմահ Յարուցեալին։ Այո՛, ցնորք չէր սա երեսկայութեան ստեղծագործութիւն, կենդանի իրողութիւնների վերայ, հիմնուած մի համոզումն էր, որ ոչ մի հալածանք, ոչ մի բռնութիւն քերել, դուրս կորզել նոցա սրտերից այլեւս չէր կարող։

Եւ ոչ մարդկանց անտարբերութիւնն ու անհաւատութիւնը կարող են աշխարհից հանել այդ համոզումը, քանի կենդանի է Քրիստոսի անունը, կենդանի է պատմութիւնը, կենդանի են բարոյական զգացումներ և ձգտումներ։ Վեղեցիկ և երկդիմի խօսքեր այստեղ ոչինչ զին չուներ, ահագին և սարսափելի բան է արդարեւ հաւատալ, թէ եղել է մէկը՝ մահուան կապանքը քանդել է, չէ եւթարկուել այն ճակատագրին, որ բոլոր մարդիկ իրենց բաժինն են համարում, որ դառնացնում խաւարեցնում է նոցա ողջ կեանքը։ Մահ, գերեզման... որ կողմ որ նայես, ամեն ինչ մեռնում է, դեռ կեանքի սկիզբը չառած, ծաղկում է, որպէս զի թառամի, շունչ է քաշում, որպէս զի ընկնի մի օր անշունչ, անկենդան... և ահա՛ այդ մեռելութեան մէջ մէկը կենդանի, մի յոյս անյուսութեան, մի լոյս այդ մթութեան մէջ, Սքանչելի խորհուրդ, անպատճառ ճշմարտութիւն, «Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր, ընդունայն եւ և հաւատքն ձեր, և զտանիցիմք սուտ վկայք Աստուծոյ»։ Այո՛, զո՛ւր, զո՛ւր է մեր ջանքը, ունայն և ողջ կեանքի խորհուրդը, եթէ ամեն ինչ, գերեզմանում պէտք է փնայ, եթէ ամենակուլ մահուան դէմ մեզ պաշտպանող մէկը չկայ։ «Եթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք ի Քրիստոս, ապա ողորմելի եմք քան զամենայն մարդիկ»։ Եթէ մենք քրիստոնեաներս վերանորոգելով մեր մէջ Տիրոջ պատկերը այնպէս ինչպէս նկարագրել են նորան աւե-

տարանները, առաքելական քարոզիչները՝ ստիպուած չենք զգում մեզ Սորա յարութեան անմիջական վիճակների հետ մէկտեղ բացականչելու: Եւ՝ ոչ էր հնար ըմբռնել Սմա ի մահ-ումնէն, ոչինչ չկայ Սորա մէջ ապականացու մահուան արժանի՝ կենդանի է Սա միշտ և անապական: Եթէ կենդանացնելով մեր սրտի ծալքերում այն բոլոր սուրբ զգացումները և վեհ սկզբունքները, որ մեր հաւատը, ս. Եւտարանը, Քրիստոսի յարութեան խորհուրդը մեզ ներշնչում են՝ այն համոզմանը չենք զալիս թէ կայ յիրաւի մի բան, որ մահուան ու ապականութեան ենթակայ չէ, թէ յարուցեալ Փրկիչը մեր կուրծքի տակ գրել է կեանքի մի սաղմ, որ կենդանի կմնայ, կծլէ ու կաճի մի նոր կեանքի համար, երբ ամեն ինչ աշխարհային ու նիւթական՝ կանցնի, կրիտափոխ մահուան բաժին կդառնայ: Երբ արդարեւ այն ժամանակ, զուր ենք Քրիստոսի սուրբ անունը մեր վերայ կրում, դատարկ խօսքերով միմեանց խաբում սուտ վրկայութիւն տալիս: Ղի վկայեցաք զԵստուծոյ՝ եթէ յարոյց զՔրիստոս, զոր ոչն արդեօք յարոյց: Եւլ արդ՝ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, առաջին պտուղն նրն ջեցելոց... Որպէս Եղաման ամենեքին մեռանին, նոյնպէս և Քրիստոսիւ ամենեքին կենդանացին... Յետին թշնամին խափանի մահ, և զամենայն ինչ հնազանդ արար ի ներքոյ ոտից նորան:

Եւ ամեն անգամ երբ մարդկութիւնը իւր մտաւոր կարողութիւնների իւր ուժերի վերայ վստահ երկնքի և երկրի երեսը կըքննէ, բնութեան զաղանիքը թափանցել կ'ընայ և վերջ ի վերջոյ ստիպուած կլինի խոստովանել, որ նորա ծածկածը զիւթական միջոցներով, լծակներով ու ակցաններով լոյս աշխարհ հանել չէ կարող, կձգատ միշտ դէպի յառաջ կըղիմէ և մի բարիքի հասնելուց յետոյ կընկատէ, որ նորանից լաւն էլ ցնորք է ու խաբելութիւն, կիորէ, զանձեր կ'ոգոյլէ և ամեն անգամ կ'տեսնէ վերջը, որ իւր ձեռքն եղածները ուրիշ ոչինչ են, եթէ ոչ անձրեային որ-

դեր՝ կհամոզուի որ չնչին է իւր զիտեցածը, տկար են և աննշան իւր ոյժերը, սնտախ իւր ջանքը, ունայն վաստակը, և աշխարհից յուսահատ կըգնէ նա շրթունքին թոյնի բաժակը... այս ձայնն է միայն, որ նորան դէպի կեանք վերակոչել, երկրի հետ կապել, կրկին ապրելու անորժակ տալ կարող է. Քրիստոս յարեալ ի մեռելոց:

Եւ ամեն անգամ երբ հայ մարդը առաջն է նայում մութ հորիզոնի վերայ մի սկնարկ ձգում և մեռելութիւն, անկումն ու քայքայումն է տեսնում ամենուրեք. տեսնում է, թէ ինչպէս կոյր անձնահաճ կըքերը ջլատում, սպառում են իւր ժողովուրդի ներքին ոյժը, ինչպէս անպատիժ կերպով անարգուում է ագնիւն ու ճշմարիտը, սուրբն ու արդարը, և քաջալերուում ոչ թէ բարին ու զեղեցիկը, այլ անարգ շողոմարանը, դաւաճան սեթեթութիւն, ինչպէս հեռն ու ատելութիւնը և նենգամիտ խարդաւանք օրհասական ճակատագիր դարձած դէպի կործանումն, դէպի անձնատպանութիւն են մղում նորան. իսկ դրսից լսուում է դեռ խաչահանուաց աղաղակը՝ անպարտ կալանաւորի գրլխի շուրջ փշեայ պսակ ոլորած, ծաղր են առնում զուարճանում քարոսիրտ մարդիկ. Սարգարեաց, ով է որ եհարն զքեզ, ս. Եկեղեցու բեմից հնչող աւետարեր ողջոյնն է կըրկին, որ մաւր մտքեր փարատում, ցաւն ու կսկիծ ամոքում յոյս և մխիթարութիւն է տալիս, եռանդ և նոր կեանք ներշնչում. Քրիստոս յարեալ ի մեռելոց:

Կ. Վ.



ԳՐԻԳՈՐ ՍԲԱՆՁԵԼԱԳՈՐԾԻ ԱՆՈՒԱԲԻ ՄԵԱՅՆ
ՅԱՄ ԼԱՏՈՒԱԾՆԵՐ:

(Յանելուած Արարատի Ա.)

Գ. Իգոր Սրամչիլագործ ծնուած է Գ. դարու սկզբներին Պանտոսի Նէսկեսարիտ քաղաքում՝ ունեւոր հեթանոս ծնողներից: Մանուկ հասակում հռետորական կրթութիւն